8653

331.7:63
4-79

1928

2010

331.7:63
Ч-79

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

Բանվորներ յեվ գյուղացիներ, ուսումնասիրեցեք խորհրդային որենքները, նրանք պաշտպանում են ձեր շահերը.

Գ. ԿՈՒԶՄԻՆՈՎ յեվ Պ. ԴՈՒԲԻՆԿԻՆ

Ի՞ՆՉ Ե ՏԿԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՏՐԱԿՆԵՐԻՆ ՅԵՎ ԲԱՏՐԱԿՈՒՀԻՆԵՐԻՆ

1938 թ.

2001

Հրատարակություն Արդարադատության Ժողկոմատի

7820 wh

331.7:63
Կ-84

ԻՆՉ Ե ՏՎԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՏՐԱԿՆԵՐԻՆ ՅԵՎ ԲԱՏՐԱԿՈՒՀԻՆԵՐԻՆ.

Բատրակի ու բատրակուհու վարձելու պայմանները.

Բատրակները յերբեք և վոչ մի յերկրում չեն ոգտվել այնպիսի լայն իրավունքներով, ինչպես հիմա խորհրդային իշխանության որոք։ Բատրակների ու բատրակուհիների աշխատանքը պաշտպանող որենքը, նախազգուշացնում է վարձողին այդ որենքը խախտելուց, մեղավորներին քրեական պատասխանատվության յենթարկելու միջոցով։

Ամենագլխավոր պայմաններից մեկը, վորը պաշտպանում է բատրակ ու բատրակուհու աշխատանքը նա է, վոր ամեն մի վարձող պարտավոր է նրանց հետ գրավոր պայմանագիր կապել։ Որենքը հնարավորություն է տալիս բատրակին ու բատրակուհուն տարուց տարի լավացնել իր աշխատանքի պայմանները ու վարձատրությունը. դրա համար նա պարտավորեց է վարձողին ամեն տարի բատրակի ու բատրակուհու հետ գրավոր պայմանագիր կապել։

Խորհրդային իշխանությունը խիստ հսկում ու

Հ.Հ.ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍԵՍԱՆՈՎԻ ԱՆՎԱՆ
Պետական Գրադարան

Ж49-57

պաշտպանում է բատրակի ու բատրակուհու շահերը ու աշխատանքը, սահմանելով բանվորական որը 8 ժամով։ Այդ մասին անպատճառ պետք է շեշտված լինի պայմանագրում, վորպեսզի վարձողը հնարավորություն չունենա շահագործելու բատրակին։

Որ ու գիշեր բատրակը ու բատրակուհին յենթարկվելիս են յեղել շահագործման կուլակի կողմից, նրանք աշխատել են ծանր պայմաններում։ Այդպես է յեղել առաջ և չպիտի լինի այժմ։ Կան կուլակներ, վորոնք կցանկան՝ ային վերադառնալ վերև շեշտած շահագործման տեսակին։ Բատրակն ու բատրակուհին պետք է լավ իմանան վոր խորհրդային իշխանությունը ամուր է պաշտպանում նրանց իրավունքները ու շահերը, դրա համար միայն հարկավոր է դիմել գյուղխորհրդին, դայրագործկոմին, աշխատանքի տեսչին կամ դատախազին։

Բատրակի ու վարձողի մեջ կապած պայմանագրի ցուցակագրումն պարտադիր է. պայմանագիրը կապելուց հետո պետք է ներկայացնվի գյուղխորհուրդին կամ դայրագործկոմին ցուցակագրելու համար։

Բատրակի, բատրակուհու աշխատանքի պայմանագրի ցուցակագրման պարտադիր լինելը սահմանված է նրա համար, վորպեսզի գյուղխորհուրդը կամ դայրագործկոմը՝ հնարավորություն ունենան հսկելու պայմանագրի որինականությանը, չցուցակագրված պայմանագիրը, վորը բատրակի ու բատրակուհու որենքով սահմանած աշխատանքի պայմանները վատթարացնում է —որինավոր ուժ չունի։

Բատրակի ու բատրակուհու աշխատավարձը.

Աշխատանքի վարձատրությունը, վորը տալիս է վարձողը բատրակին ու բատրակուհուն, չի կարող լինել ցածր, պետության կողմից նշանակված առնվազ գումարից։ Պետության կողմից նշանակվելիք աշխատանքի վարձատրության առնվազ գումարը, դա այն գումարն է, վորը սահմանվում է Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից այս կամ այն աշխատանքի համար։

Աշխատավարձի գումարը այդպիսով կարող է լինել ավել առնվազից և վոչ մի դեպքում պակաս։

Բատրակը կամ բատրակուհին՝ յեթե ցանկանում կարող են համաձայնության գալ վարձողի հետ, վարձատրությունը ստանան կիսով չափ փողով, իսկ մյուս նասը ապրանքով, ցորենով, ուտելիքով և այլն։

Այդպիսի դեպքերում վարձողները աշխատում են խաբել բատրակին ու բատրակուհուն, քանի վոր ապրանքով աշխատավարձ վճարելը ավելի եժան է արժում, ետեղ ևս որենքը պաշտպանում է բատրակին ու բատրակուհուն, որենքը պարտավորեցնում է այդ բոլորը գնահատել և յեթե վճարած գումարը առնվազից ցածր է վարձողը պարտավոր է լրացնել սահմանված գումարի առնվազ։

Բատրակի ու բատրակուհու բանվորական որը.

Բացի այն, վոր որենքով բատրակի ու բատրակուհու բանվորական որը սահմանված է 8 ժամով, նույն որենքի համաձայն, վարձողը պարտավոր է շաբաթվա

մի որը ազատել նրանց բոլոր տեսակի աշխատանքներից հանգստանալու համար. ազատել բոլոր տեսակի աշխատանքներից հեղափոխական տոներին և առանձնահատուկ սահմանված հանգստության համար որերին:

Տարվա ընթացքում վարձողը պարտավոր է բատրակին ու բատրակուհուն ազատել հետևյալ հեղափոխական տոներին. 1) Հունվարի 1-ին—Նոր տարի, 2) Հունվարի 22 ին—Արյունոտ Կիրակի, 3) Մարտի 12-ին—Ցարիզմի տապալումը, 4) Մարտի 18-ին—Փարիզի Կոմմունայի որը, 5) Ապրիլի 22 ին—Ադրբեջանի Խորհրդայնացման որը, 6) Մայիսի 1-ին—Ինտերնացիոնալի որը, 7) Սեպտեմբերի 20-ին—Բաքվի 26 Կոմիսարների հիշատակը, 8) 7-ին և 8-ին Նոյեմբերի—Պրոլետարական հեղափոխության որերը:

Բացի վերոհիշյալ որերը, վարձողը պարտավոր է ազատել բատրակին նաև ամեն տեսակ աշխատանքից տարվա ընթացքում 5 որը համաձայն Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից այդ նպատակով հրատարակած վորոշումներին:

Հիշված վոչ բանվորական որերին և 8 ժամյա աշխատանքը կատարելուց բատրակը ու բատրակուհին կարող են բացակայել աշխատանքի վայրից և օգտագործել իրենց ազատ ժամանակը այնպես, ինչպես ցանկանում են:

Բատրակի ու բատրակուհու աշխատանքի պաշտպանումը.

Խորհրդային իշխանությունը հսկում է վորպեսզի պաշտպանե աշխատավորության առողջությունը չը-

քայքայվի ծանր աշխատանքներից, դա մանավանդ վերաբերվում է կանանց և յերեխաների կողմից տարվող աշխատանքներին:

Որենքի համաձայն հղիացած կանայք-բատրակուհիները և փոքրահասակ բատրակները և բատրակուհիները չպիտի կատարեն ծանր, ուժասպառ առողջությունը վնասող աշխատանքներ: Յեթե վարձողը որենքի հակառակ ստիպում է նրանց կատարել ծանր և առողջության վնասակար աշխատանքներ, այդ դեպքում նա յենթարկվում է քրեական պատասխանատվության:

Հին ժամանակներում, յեթե բատրակը կամ բատրակուհին իրենց ծառայության ժամանակ հիվանդացել են կամ վնաս են ստացել ու հաշմանդամ (ինվալիդ) դարձել, տերը դուրս է շպրտել նրանց փողոց և վոչ թե վոչինչ չի տվել, այլ և ասել է թե նրանք շնորհակալ պիտի լինեն այդքան պատելուց ու կերակրելուց:

Պարզ է, վոր բողոքելը իզուր է յեղել, վոչ վոք չի կարողացել բողոքել քանի վոր այդպիսի բողոքները չեն լուծվել, ուր բատրակը գնացել է այնտեղ նստած են յեղել կոլակները, բեգերը ու խաները և սրանք ել ավելի են շահագործելիս յեղել:

Այժմ վարձողը կամ ինքն է պարտավոր վճարել բատրակի ու բատրակուհուն աշխատավարձը նրանց հիվանդության, հաշմանդամության և այլ հետևանքներով կամ պարտավոր է ապահովագրել իրեն ծառաներին սոցիալական ապահովագրման հիմնարկությունում, վորը պարտավորվում է նպաստել բատրակին ու բատրակուհուն. 1) հիվանդության ընթացքում, 2) խեղան-

դամութեան (ՀԼաս ստացած) ընթացքում, 3) հղիութեան և ծննդաբերման ընթացքում, 4) նորածին յերեխային կերակրելու համար, 5) վախճանվածին թաղելու 6) հաշմանդամութեան հետևանքով և 7) նպաստել ընտանիքին՝ վերջինիս աշխատավորի մահից հետո։

Բատրակի ու բատրակուհու աշխատանքի պաշտպանությունը.

Այնպես, ինչպես և բանվորները, բատրակը ու բատրակուհին աշխատանքից հեռանալու հետևանքով պետք է բավարարվեն յերկու շաբաթվա աշխատավարձով արձակման տոթիվ։

Վարձողը առանց որինավոր պատճառի բատրակին կամ բատրակո հուն վաղաժամ արձակելու իրավունք չունի։

Յեթե բատրակը կամ բատրա՛ուհին գտան վոր վարձողը կամ ուղիղ չի վարձատրել, կամ հիվանդության հետևանքով չի ուզում վարձատրել, խուսա՛ում է աշխատավարձը վճառելուց, կամ արձակում է աշխատանքից որենքի հակառակ, կարող են վերականգնել իրենց իրավունքները հաշտարար հանձնաժողովների կամ դատարանի միջոցով։

Հաշտարար հանձնաժողովները կազմվում են գյուղխոր ուրդի նախագահից և բատրակի և վարձողի ներկայացուցիչներից. բատրակը և վարձողը կարող են վոչ թե ներկայացուցիչներ տալ, այլ իրենք մասնակցել վորպես հանձնաժողովների անդամներ և վորոշել առաջացած վեճը։

Յեթե հաշտարար հանձնաժողովները վոչ մի յեզրակացություն չեն գալիս, վեճը չեն վորոշում, այն ժամանակ հարցը վորոշում է դատարանը և պարտադիր կերպով իրագործում։

Պետք է մոռանալ, վոր խորհրդային դատարանին, բատրակը ու բատրակուհին պետք է ճանաչեն վորպես իրենց շահերը պաշտպանող որգանին, քանի վոր խորհրդային դատարանում գործերը վորոշում են նույնպես աշխատավորները։

Խորհրդային իշխանությունը—շահագործվածների և յերկար տարիների ընթացքում տառապված աշխատավորության հարազատ իշխանությունն է: Դրա համար էլ իշխանությունը ամուր է պահում այն նվաճումները, վորոնք տրվել են պրոլետարական հեղափոխության կողմից բատրակությանը:

Հարկավոր է այդ միշտ հիշել և խորհրդային որենքները խախտելու դեպքում դիմել իշխանության համապատասխան որգանին։

Ա. ՍՍՍՄՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

Тип. „Красный Восток“, Бакполиграфа. Баку. Карантин., 84.
Главлит № 6550. Зак. № 2520. Тир. 500.

2013
<< Ազգային գրադարան
NL0041731